ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17 նոյեմբերի 2016 թվականի N 175-Ա

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ *Հարություն Ալեքսանյանին* 2016 թվականի նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 2-ը ներառյալ, տաս օրով, գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 24-ի N 1095-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար:

2. *Հարություն Ալեքսանյանի* գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի լիազորությունների *իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի տեղական ինքնակառավարման և* հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ՝ *Արմեն Հակոբյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 17
ք. Հրազդան